

մարաջախտ Հայոց՝ յիշի յաւուրս թագրնկալութեան Լեւոնի՝ Վասիլ՝ տէր Վաներոյ, ոչ գիտեմ յորմէ՝ տոհմէ, եւ վերջին ծանօթ՝ Պաղտին, հայրն Բ Կոստանդնի թագաւորի։ Յետ սոցա զլիաւոր ՚ի զինուորական դասու յայտնի ուրեք հայերէն կամ հին պարսիկ ձեւովն՝ *Սպասալար*, եւ նշանակէ զհեծելապետն. ցուցաւ սպաս նորա ՚ի հանդիսի թագաւորութեան։ Ի պատմութեան՝ յանուանէ յիշի յամի 1260 *Լեւոն Ապլիասնանց* Ասպասալար առ Հեթմով Ա։ Առ բազումս յարեւմտեայց մարաջախտն վերագոյն էր քան զգունդստապլն յառաջնորդութեան զօրաբանակին¹¹³։

Վեհագոյն քան զմարաջախտն համարէր պատտով՝ **Մենեսկալն** կամ **Մենեսկալ** (Siniscalcus, Sénéchal) որ թարգմանի ըստ հին փռանկ բառի՝ Մեղանադիր, եւ էր վերակացու կամ հոգաբարձու արքունի տանն, տնտեսող ելից եւ մտից եւ ամենայն ընչից նորին, *հաւատարիմ տան* նորա, ըստ գրոց, կամ *Հազարապետ* քան եթէ *տաճարապետ*։ Առ Լեւոնի Մեծաւ՝ այսպիսի համարէր Սիր Ատան, որ եւ Պայլ կարգեցաւ դստեր նորին եւ ժառանգի։ Սակաւք ՚ի յաջորդացն ծանօթք են ՚ի պատմութեան եւ ՚ի բովանդակ թագաւորութեան Հեթմոյ ոչ ոք յիշի. գուցէ եղբայր նորա Լիկոս կարգեալ էր յայդ, զի ոչ նշանակի սմա պաշտօն ՚ի պատմութեան¹¹⁴։

¹¹³ Մարաջախտք Սիսուանայ.

1198-1214 Վասիլ, Տէր Վաներոյ.

1215-1226 Վահրամ Կոռիկոսեցի.

1226 †1258 Լեւոն, որդի Կոստանդնի Պայլի.

1260 Լեւոն Ապլիասնանց Ասպասալար.

1277 †95 Օշին, որդի Կոստանդնի Լամբրունեցոյ.

..... Թորոս, Տէր Սիմանակլայի.

1307-16 Սմբատ, Տէր Պինակին.

1329 †37 Պաղտին, Տէր Նորոյ.

Անուամբ միայն

1387 Յովհան de Tabarie (՚ի Կիպրոս).

1397 Յովհան de Brie*.

1440 Ա. Ա. յիշի ՚ի Կիպրոս։

1459-63 Փերոս, հարձորդի Յանոս թագաւորի Կիպրոսի։

* Commemoriali IX, N 71.- Դիւանք Վենետկոյ։

¹¹⁴ Մենեսկալք Սիսուանայ

1210-19 Սիր Ատան.